Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Բագրատաշենի Մ. Մագուլյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ), ֆիզիկայի (17 դասաժամ), ԹԳՀԳ (4 դասաժամ) և անգլերենի (28 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1)
- 1 լուսանկար 3×4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
- ինքնակենսագրություն
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստափղթեր՝ առկայության դեպքում
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են **2022թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 15:00,** բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ սեպտեմբերի 15-ին՝ ժամը 11:00 (դասվար), ժամը՝ 15:00 (անգլերեն), սեպտեմբերի 16-ին՝ ժամը 11:00 (ԹԳՀԳ), ժամը 15:00 (ֆիզիկա)** Բագրատաշենի Մ.Մագուլյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում, հասցե գ. Բագրատաշեն, 6-րդ փողոց, շենք 15: